

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄ 2019 (COVID-19)

Ի՞նչ պետք է իմանալ

Հանրային Առողջապահությունը (Public Health) հորդորում է բոլորին նախազգուշական միջոցներ ձեռնարկել՝ COVID-19-ի տարածումը դանդաղեցնելու համար:


Ինչպե՞ս է այն տարածվում:



Կաթիլների միջոցով, երբ վարակված անձը հագում, փռչտում կամ խոսում է




Մակերեսներին և հետո երեսին դիպչելուց




Սերտ անձնական շփման միջոցով, օրինակ՝ վարակված անձ խնամելիս

Որո՞նք են ախտանիշները:



Բարձր ջերմություն



Հազ



Շնչարգելություն

Ախտանիշները կարող են ներառել նաև ցնցումներ, մկանների կամ մարմնի ցավ, հյուծվածություն, գլխացավ, կոկորդի ցավ, սրիխառնոց կամ փսխում, փորլուծություն, քթի խցանում կամ քթահոսություն և համի կամ հոտի նոր կորուստ: Ախտանիշների այս ցուցակը լիարժեք չէ: Խնդրում ենք խորհրդակցել Ձեր բժշկի հետ Ձեզ անհանգստացնող ցանկացած այլ ծանր ախտանիշների մասին:

Ի՞նչ կարող եմ անել ինձ և ուրիշներին COVID-19-ից պաշտպանելու համար:

- Եթե դուրս եք գալիս, կրեք դիմակ կամ քիթը և բերանը ծածկող այլ միջոց
 - Նորածիններն ու 2 տարեկանից փոքր երեխաները չպետք է օգտագործեն դիմակ, իսկ 2-8 տարեկան երեխաները պետք է կրեն այն միայն այն դեպքում, եթե վերահսկողության տակ են
 - Ցանկացած անձ, ով դժվարանում է շնչել, անգիտակից վիճակում է, առանց օգնության չի կարող հանել դիմակը, կամ բուժաշխատողի կողմից դիմակ չկրելու հրահանգ ունի, չպետք է կրի այն:
- Հնարավորինս շատ մնացեք տանը:
- Պահպանեք առնվազն 6 ոտնաչափ հեռավորություն ուրիշներից:
- Ձեռքերը հաճախ լվացեք օձառով և ջրով առնվազն 20 վայրկյան:
- Խուսափեք աչքերին, քթին և բերանին դիպչելուց
- Հազալուց կամ փռչտալուց օգտագործեք անձեռոցիկ կամ ձեռ թևը (ոչ թե ձեռքերը):